ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը զբաղեցված պաշտոնը

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարար Ժաննա Անդրեասյան

2. Գործուղման վայրը և ժամկետները

Իրանի Իսլամական Հանրապետություն (Շիրազ, Թեհրան)
2025 թվականի սեպտեմբերի 6-8-ը

3. Հրավիրող կողմը

Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային ժառանգության, զբոսաշրջության և ձեռարվեստի նախարար Սեյեդ Ռեզա Սալեհի Ամիրի

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Երկկողմ հանդիպումների ձևաչափով քննարկել կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներում Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցության զարգացման հեռանկարային հնարավորությունները։

5. Քննարկված թեմաները

- ԻԻՀ Ֆարս նահանգում մշակութային նոր ծրագրերի և միջոցառումների անցկացման հնարավորություններ, որոնք կնպաստեն Հայաստանի և Իրանի միջև մշակութային կապերի խորացմանը՝ ներառյալ համատեղ ցուցահանդեսներ, պատմամշակութային թեմատիկ նախաձեռնություններ և համերգային ծրագրեր,
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկվելու համար համատեղ հայտերի ներկայացում,
- զբոսաշրջության ոլորտում համագործակցության հնարավորություններ,
- թանգարանային ցուցադրությունների կարևոր դերը զբոսաշրջության խթանման գործում,

- Հայաստանում պարսկերենի ուսուցման ընդլայնման և զարգացման հնարավորությունները հանրակրթության և բուհական համակարգերում,
- պարսկերենի առցանց դասընթացների կազմակերպման հնարավորություններ,
- Իրանում պարսկերենի ուսուցման նպատակով կրթաթոշակային ծրագրերի ներդրման հեռանկարներ,
- ուսումնական նոր նյութերի և դասագրքերի ստեղծմանը վերաբերող հարցեր,
- Իրանի հանրակրթական դպրոցներում հայերենի ուսուցման հնարավորություն,
- ուսուցիչների վերապատրաստում,
- Հայաստանում գործող երիտասարդական կենտրոնների և Իրանում գործող երիտասարդական տների միջև համագործակցություն,
- Հայաստանի առաջատար բուհերի և Թեհրանի համալսարանի միջև փոխադարձ այցերի, գիտաժողովների ու համատեղ ծրագրերի իրականացում,
- Թեհրանի համալսարանում հայերենի ուսումնառության հնարավորությունների ընդլայնում, ինչպես նաև ԵՊՀ-ում և ԲՊՀ-ում իրանագիտության ու պարսկերենի ուսուցման զարգացում,
- Հայաստանի և Իրանի բուհերի կողմից տրված ավարտական փաստաթղթերի փոխճանաչում,
- Հայաստանում Իրանի մշակույթի օրեր և Իրանում Հայաստանի մշակույթի օրեր անցկացնելու հնարավորություն,
- «Ոսկե ծիրան» և «Ֆաջր» կինոփառատոների միջև հաստատված հաջող համագործակցության շարունակում՝ ֆիլմերի փոխանակում, համատեղ արտադրություններ և թարգմանություններ,
- Դասավանդողների և գիտնականների փոխանակման, կրթական և գիտական համատեղ ծրագրերի իրականացման հնարավորություններ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի շրջանակում՝ Շիրազ քաղաքում իմ գլխավորած պատվիրակության (այսուհետ՝ Պատվիրակություն) անդամ ՀՀ կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանի և Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանի հետ հանդիպեցի ԻԻՀ Ֆարսի նահանգապետ Հոսեյն Ալի Ամիրիի հետ: Շնորհակալություն հայտնելով նահանգապետին ջերմ ընդունելության և արդյունավետ համագործակցության համար՝ ընդգծել եմ Հայաստանի և Իրանի միջև պատմականորեն ձևավորված բարեկամական հարաբերությունների առանձնահատուկ

կարևորությունը։ Վստահություն եմ հայտնել, որ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանի և նրա գլխավորած պատվիրակության՝ 2025 թ. օգոստոսի 18-20-ը Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցը կնպաստի երկկողմ կապերի ամրապնդմանը և փոխհամագործակցության զարգացմանը։

Հանդիպման ընթացքում կարևորվել է Պերսեպոլիս համալիրի տարածքում սեպտեմբերի 6-ի կազմակերպված համերգը, որը նվիրված էր Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադրման 100-ամյակին։ Նշել եմ, որ միջոցառումն ունի բացառիկ նշանակություն ոչ միայն Հայաստանի մշակութային ժառանգության հանրահռչակման, այլև Հայաստան - Իրան բարեկամական հարաբերությունների խորացման առումով։ Շնորհակալություն եմ հայտնել Ֆարսի նահանգապետին՝ համերգի բարձր մակարդակով կազմակերպումն ապահովելու գործում ցուցաբերած աջակցության համար։ Հայտնել եմ, որ նմանօրինակ բացառիկ հարթակներում մշակութային միջոցառումների անցկացումը կրում է խորհրդանշական և խորքային մշակութային նշանակություն։ Նշել եմ, որ Հայաստան - Իրան հարաբերությունները դարավոր պատմություն ունեն, իսկ Ֆարս նահանգը՝ իր հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, կարող է ծառայել որպես եզակի կամուրջ մեր երկու ժողովուրդների միջև։ Կարևորել եմ նաև Իրանի հայ համայնքի դերը՝ նշելով, որ այն երկրի հնագույն և լավագույնս ինտեգրված համայնքներից է։ Հայաստանի և Իրանի միջև հարաբերությունների ամրապնդման համատեքստում ընդգծվել է նաև երկու երկրներում հավատարմագրված դեսպանների արդյունավետ աշխատանքն ու մեծ դերակատարումը։ Կարևորել եմ նաև միջմարզային համագործակցությունը՝ հայտնելով, որ Երևան քաղաքը նախատեսվում է հռչակել Շիրազի քույր քաղաք։

ԻԻՀ Ֆարսի նահանգապետ Հոսեյն Ալի Ամիրին բարձր է գնահատել Պատվիրակության այցը՝ ընդգծելով, որ Հայաստանն Իրանի համար ռազմավարական գործընկեր է և բարեկամ երկիր։ Նա ընդգծել է, որ երկու երկրների պատմական և մշակութային կապերը պարտավորեցնում են շարունակաբար զարգացնել և խորացնել համագործակցությունը։ Նահանգապետը հատուկ կարևորել է նաև Պերսեպոլիսում համերգի նշանակությունը՝ այն բացառիկ առիթ է, որը վկայում է երկու ժողովուրդների մշակութային փոխհարստացման մասին և կնպաստի երկկողմ հարաբերությունների զարգացմանը։ Հոսեյն Ալի Ամիրին վերահաստատել է Ֆարս նահանգի պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստան–Իրան հարաբերությունների խորացմանը, հատկապես մշակութային և միջմարզային համագործակցության ոլորտներում։

Սեպտեմբերի 6-ին Պերսեպոլիս պատմական համալիրի տարածքում տեղի է ունեցել Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի բացօթյա համերգը։ Այս բացառիկ իրադարձությանը ներկա են եղել նաև ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Հոսեյն Սիմայի Սարրաֆին, ԻԻՀ Ֆարսի նահանգապետ Հոսեյն Ալի

Ամիրին, ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ինչպես նաև բարձրաստիճան այլ պաշտոնյաներ:

Նախքան համերգի մեկնարկը ես, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ու Պատվիրակության մյուս անդամները շրջել ենք Պերսեպոլիս պատմական համալիրի տարածքում, ծանոթացել հուշարձանի պատմությանը: Պերսեպոլիսի ընծաների նվիրաբերման հարկաբաժնում հայկական պատվիրակությանը ներկայացվել է Հայաստանի և Իրանի ժողովուրդների միջև բարեկամության ու կապի ամենահին փաստաթուղթը, որն ավելի քան 2500 տարվա պատմություն ունի:

Բացառիկ համերգը մեկնարկել է երկու երկրների օրհներգերի կատարմամբ: Հանդիսավոր միջոցառման մասնակիցներին ողջունել եմ՝ մասնավորապես նշելով, որ Պերսեպոլիսի խորապատկերում այսօր միավորվել են երկու հնագույն քաղաքակրթությունների պատմությունն ու մշակույթը: Այս հոբելյանական համերգը՝ նվիրված Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադրման 100-ամյակին, մեր երկրների միջև բարեկամության, փոխադարձ հարգանքի և մշակութային երկխոսության արտահայտությունն է: Ընդգծել եմ, որ այս տարի Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մասուդ Փեզեշքիանի վերջին պաշտոնական այցը Հայաստանի Հանրապետություն երկու երկրների միջև բարձր մակարդակի քաղաքական երկխոսության և փոխադարձ հարգանքի շարունակական զարգացման վկայությունն էր և կարևոր հանգրվան՝ Հայաստան-Իրան բարեկամական հարաբերությունների ամրապնդման և երկկողմ համագործակցության նոր հեռանկարների ձևավորման ճանապարհին: Նշել եմ, որ այսօրվա հոբելյանական համերգը՝ հնչող բարձրարվեստ երաժշտությամբ, վեր է քաղաքական սահմաններից. այն խոսք է համամարդկային արժեքների, խաղաղության, համագործակցության և մշակույթների ներդաշնակ համակեցության մասին:

Նաև ընդգծել եմ, որ տարիներ առաջ ևս Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ, պատիվ է ունեցել հանդես գալու Թեհրանի «Վահդաթ» դահլիճում:

Ամփոփելով խոսքս՝ շնորհակալություն եմ հայտնել Իրանի Իսլամական Հանրապետության իշխանություններին, Մշակութային ժառանգության, զբոսաշրջության և ձեռարվեստի նախարար Սեյեդ Ռեզա Սալեհի Ամիրին, Ֆարս նահանգի ղեկավարությանը և Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը՝ համերգի կազմակերպմանը գործուն աջակցություն ցուցաբերելու համար:

Ողջույնի խոսքով հանդես են եկել նաև ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը՝ ընդգծելով, որ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հոբելյանական համերգի կազմակերպմանը գործուն աջակցություն է ցուցաբերել իրանական կողմը, ինչպես նաև ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Հոսեյն Սիմայի Սարրաֆին:

Համերգը ղեկավարել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը: Համերգի մենակատարն էր հռչակավոր տենոր Լիպարիտ Ավետիսյանը, որի կատարմամբ հնչել են Սայաթ-Նովայի «Իմ քամանչա» արիան՝ Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերայից, Կոնստանտին Պետրոսյանի «Հայաստան» և Ռոբերտ Ամիրխանյանի «Երազ իմ երկիր հայրենի» երգերը: Հնչել է նաև Ռուհոլլահ Խալեղիի «Ո՜վ Իրան» հայրենասիրական երգը: Երեկոյի գագաթնակետն Արամ Խաչատրյանի թիվ 2-րդ Սիմֆոնիայի կատարումն էր:

Նշեմ, որ ծրագիրը կյանքի է կոչվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի, ԻԻՀ մշակութային ժառանգության, զբոսաշրջության և ձեռարվեստի նախարարության, Մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության, ինչպես նաև ԻԻՀ Ֆարսի նահանգապետարանի համագործակցությամբ:

Հաջորդը օրը՝ սեպտեմբերի 7-ին Պատվիրակությունը այցելել է ԻԻՀ մայրաքաղաք Թեհրան: Այցի շրջանակում Իրանի ազգային գրադարանի և արխիվի կազմակերպությունում հանդիսավորությամբ բացվել է Հայկական անկյուն, որտեղ ցուցադրվելու են Հայաստանի պատմության և մշակույթի մասին շուրջ 60 անուն գրքեր: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն կազմակերպությանը արդեն փոխանցել է 15 անուն գիրք: Մի շարք գրքեր Հայկական անկյանը նվիրաբերել են նաև Պատվիրակության անդամները:

Նախաձեռնությունն իրագործվել է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի առաջարկով և ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության աջակցությամբ:

Միջոցառմանը մասնակցել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը, ԻԻՀ ազգային գրադարանի և արխիվի կազմակերպության ղեկավար Ղոլամռեզա Ամիրխանին, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Արայիկ Խզմալյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը: Ընդգծելով խորհրդանշական իրադարձության կարևորությունը՝ նշել եմ, որ Հայկական անկյունի բացումը ըստ էության, Հայաստան - Իրան դարավոր բարեկամության, հարևանության և միջմշակութային երկխոսության ևս մեկ վկայություն է: Հայաստանի և Իրանի միջև մշակութային կապերի մասին խոսելիս պետք է առանձնահատուկ ընդգծել այն հիմնարար հաստատությունները, որոնք ծառայել և շարունակում են ծառայել մեր հիշողության պահպանմանը: Ընդգծել եմ, որ Իրանում այդ առաքելությունը ստանձնել է ԻԻՀ ազգային

գրադարանի և արխիվի կազմակերպությունը, իսկ Հայաստանում՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը և Հայաստանի ազգային գրադարանը: Մատենադարանը, լինելով հայկական և օտարալեզու հազարավոր ձեռագրերի ու հնատիպ գրքերի պահոց, համարվում է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային քաղաքակրթության անգնահատելի կենտրոն: Հայաստանի ազգային գրադարանը՝ իր հսկայական գրքային հավաքածուով, կարևոր դեր ունի հայ ժողովրդի գիտական ու գրական հարստության պահպանման և հանրայնացման գործում:

ԻԻՀ ազգային գրադարանի և արխիվի կազմակերպության ղեկավարի հետ հանդիպմանն անդրադարձ է եղել նաև Հայաստանի և Իրանի ազգային գրադարանների համագործակցության խորացմանը: Հատուկ շեշտվել է այս տարվա օգոստոսի 19-ին Երևանում ստորագրված «Հայաստանի ազգային գրադարանի և Իրանի Իսլամական Հանրապետության ազգային գրադարանի և արխիվի կազմակերպության միջև» փոխըմբռնման հուշագրի նշանակությունը, որի շրջանակում նախատեսվում են մասնագիտական փորձի փոխանակում, համատեղ նախագծեր և նոր նախաձեռնություններ: Կարևորել եմ նաև գրադարանային համակարգի մասնագետների վերապատրաստման և մասնագիտական կարողությունների զարգացման հնարավորությունները: Անդրադառնալով թարգմանական ծրագրերին՝ ես ու ԻԻՀ ազգային գրադարանի և արխիվի կազմակերպության ղեկավարը կարևորել ենք հայերենից պարսկերեն և պարսկերենից հայերեն գրականության թարգմանությունն ու հանրահռչակումը: Հանդիպումը եզրափակվել է կողմերի պատրաստակամությամբ՝ շարունակելու մշակութային համագործակցությունը և միասին աշխատելու նոր ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Հաջորդիվ Պատվիրակությունը հանդիպել է ԻԻՀ մշակութային ժառանգության, զբոսաշրջության և ձեռարվեստի նախարար Սեյեդ Ռեզա Ամիրիի հետ:

Հանդիպմանը մասնակցել են ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը, «Մշակութային զարգացման» հիմնադրամի տնօրեն Կարեն Ավետիսյանը, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Արայիկ Խզմալյանը, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Հարությունյանը, ինչպես նաև Պատվիրակության այլ անդամներ:

ԻԻՀ մշակութային ժառանգության, զբոսաշրջության և ձեռարվեստի նախարար Սեյեդ Ռեզա Ամիրին ողջունել է ինձ՝ բարձր գնահատելով Հայաստանի և Իրանի միջև մշակութային կապերի ամրապնդման ուղղությամբ իրականացվող քայլերը: Հանդիպմանը անդրադարձ է

կատարվել Պերսեպոլիսում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկի 100-ամյակին նվիրված համերգը՝ որպես առանձնահատուկ, պատմական նշանակություն ունեցող միջոցառում, որը լայն արձագանք է գտել Իրանի հանրության շրջանում: Նա հավելել է, որ համերգը հեռարձակվել է Իրանի հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերում և ունեցել հազարավոր հեռուստադիտողներ: Սեյեդ Ռեզա Ամիրին ընդգծել է, որ այս համերգը հանդիսանում է մշակութային կապերի վերականգնման և խթանման կարևոր սկիզբ: Իրենց հնագետներն էլ են նկատել, որ նման մասշտաբի միջոցառումներ Պերսեպոլիսի համալիրում հազվադեպ են կազմակերպվում, ուստի այս քայլը կարևոր և յուրահատուկ էր՝ հստակ ցույց տալով երկու ժողովուրդների պատմամշակութային կապերը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ կարևորել եմ երկու երկրների միջև ձևավորված բարեկամական ու պատմական կապերը՝ ընդգծելով հարաբերությունների զարգացման մեծ ներուժը: Նաև բարձր եմ գնահատել ԻԻՀ նախագահի՝ վերջերս Հայաստան կատարած այցը, որը, ըստ ինձ, երկու երկրների ռազմավարական գործընկերության օրակարգն ավելի է հարստացրել նոր շերտերով: Նշել եմ, որ այս համագործակցության կարևոր բաղադրիչներից մեկը մշակույթն է, որի ուղղությամբ արդեն ստորագրվել են մի շարք համատեղ փաստաթղթեր: Սեպտեմբերի վեցին տեղի ունեցած համերգը միջմշակութային ակտիվ փոխգործակցության վառ ապացույցն է: Ընդգծել եմ նաև, որ նմանօրինակ միջոցառումները նպաստում են հուշարձանների հանրահռչակմանը՝ պահպանելով անհրաժեշտ զգուշավորությունը, անվտանգային կանոնները և շնորհակալություն եմ հայտնել համերգի կազմակերպման հարցում ցուցաբերած աջակցության համար:

Կարևորել ենք երկու երկրների համագործակցության ընդլայնման հնարավորությունները թանգարանային, արձաթագործության, ձեռարվեստի, ինչպես նաև հուշարձանների վերականգնման և պահպանման ոլորտներում՝ ընդգծելով այս ուղղություններով փորձի փոխանակման ծրագրերի անհրաժեշտությունը: Անդրադարձ է եղել նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկվելու համար համատեղ հայտերի ներկայացման հարցին:

Անդրադառնալով ձեռարվեստի ոլորտում համագործակցության զարգացմանը՝ առաջարկել եմ կազմակերպել Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արհեստների թանգարանի և ԻԻՀ թանգարանների համատեղ ցուցադրություն: Նաև հրավիրել եմ իրանական կողմին մասնակցելու ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից անցկացվող ամենամյա «Արհեստների միջազգային փառատոնին»՝ միաժամանակ կարևորելով հայ վարպետների մասնակցության ապահովումն Իրանում անցկացվող նմանատիպ փառատոներին:

ԻԻՀ գործընկերոջը հրավիրել եմ մասնակցելու Երևանում նոյեմբերի 26-28-ը կայանալիք «Մշակութային խաչմերուկ» միջազգային համաժողովին, որը նվիրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային

ինքնարտահայտման բազմազանության պաշտպանության և խթանման մասին կոնվենցիայի 20-ամյակին։

Հաջորդիվ Պատվիրակությունը այցելել է «Սաադի» հիմնադրամ, որտեղ հանդիպել է հիմնադրամի նախագահ Ղոլամ Ալի Հադդադ Ադելի հետ։ Հանդիպմանը ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Արայիկ Խզմալյանը, «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Հարությունյանը, պատվիրակության այլ անդամներ։

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ կարևորել եմ Հայաստանի և Իրանի միջև բարեկամական և պատմամշակութային հիմքերի վրա ձևավորված բազմակողմ համագործակցությունը՝ ընդգծելով դրա խորացման անհրաժեշտությունը հատկապես կրթության և մշակույթի ոլորտներում։ Անդրադառնալով կրթության ոլորտում համագործակցությանը՝ նշել եմ, որ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրում առանձնահատուկ տեղ է հատկացվել տարածաշրջանային լեզուների, այդ թվում՝ պարսկերենի ուսուցման խթանմանը։ Տեղեկացրել եմ, որ ներկայում Հայաստանի 13 դպրոցում իրականացվում է պարսկերենի ուսուցում։ Քննարկել ենք Հայաստանում պարսկերենի ուսուցման ընդլայնման և զարգացման հնարավորությունները հանրակրթության և բուհական համակարգերում։ Իմ խոսքով՝ պարսկերենի ուսուցման և հետազոտությունների իրականացման առումով կարևոր հարթակ կարող է հանդիսանալ նաև «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը, որտեղ պահվող հնագույն ձեռագրերը գիտական հետազոտությունների հարուստ պաշար են։

Ղոլամ Ալի Հադդադ Ադելը ողջունել է Պատվիրակության այցը և ընդգծել երկու երկրների պատմական կապերն ու բարեկամական հարաբերությունները։ Նա բարձր է գնահատել ՀՀ կառավարության՝ տարածաշրջանային լեզուների ուսուցման քաղաքականությունը՝ նշելով, որ այն ոչ միայն լեզվական կրթություն է, այլև խթանում է տարածաշրջանային մշակութային փոխըմբռնումը։

Հաջորդիվ Պատվիրակությունը հանդիպել է Թեհրանի համալսարանի ռեկտոր Մոհամմադ Հոսեյն Օմիդի հետ։ Հանդիպմանը մասնակցել են նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը, ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ինչպես նաև պատվիրակության այլ

անդամներ։ Շնորհակալություն հայտնելով ընդունելության և արդյունավետ երկխոսության համար՝ կարևորել եմ Հայաստանի և Իրանի միջև բարեկամական սերտ հարաբերությունների ու համագործակցության շարունակական խորացումը։ Ընդգծել եմ հատկապես բարձրագույն կրթության և գիտության ոլորտում Իրանի հետ համագործակցության մեծ ներուժը։ Վստահություն եմ հայտնել, որ կրթության և գիտության ոլորտում համագործակցության խորացումը նոր հեռանկարներ կբացի ինչպես ուսանողների ու դասախոսների, այնպես էլ երկու երկրների հասարակությունների համար։ Իմ խոսքով՝ հատկապես գիտական հետազոտությունների և ուսումնական ծրագրերի համատեղ իրականացումը կարող է դառնալ երկկողմ հարաբերությունների զարգացման հիմնասյուներից մեկը։

Ռեկտոր Մոհամմադ Հոսեյն Օմիդը, ողջունելով ԿԳՄՍ նախարարի այցը, ընդգծել է, որ Հայաստանի բուհերի հետ գործընկերության զարգացումը Թեհրանի համալսարանի համար կարևոր նշանակություն ունի։

Կարևորել ենք նաև Հայաստանի և Իրանի բուհերի դիպլոմների փոխճանաչման ապահովումը, կառուցողական երկխոսության և համագործակցության խթանումը բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում։

Աշխատանքային այցի 2-րդ օրվա ավարտին Պատվիրակությունը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության մշակույթի և իսլամական առաջնորդության նախարար Սեյեդ Աբբաս Սալեհիի հետ։ Հանդիպմանը մասնակցել են նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, «Մշակութային զարգացման» հիմնադրամի տնօրեն և «Ոսկե ծիրան» կինոփառատոնի գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանը, Հայաստանի կինոյի հիմնադրամի տնօրեն Դավիթ Բանուչյանը, ԻԻՀ-ում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ինչպես նաև պատվիրակության այլ անդամներ։

Շնորհակալություն եմ հայտնել իրանական կողմին ջերմ ընդունելության համար, կարևորել եմ երկու երկրների միջև ձևավորված բարեկամական ու գործընկերային հարաբերությունները՝ ընդգծելով նաև մշակույթի ոլորտում փոխգործակցության լայն ներուժը։ Առանձնահատուկ շեշտել եմ սեպտեմբերի 6-ին Իրանի Պերսեպոլիս համալիրի տարածքում Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի 100-ամյա հոբելյանին նվիրված համերգի նշանակությունը՝ որպես Հայաստանի և Իրանի մշակութային բարեկամության խորհրդանշական իրադարձություն։

Ներկայացրել եմ Հայաստանում կինոոլորտի օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես՝ համատեղ կինոարտադրության պարագայում ներդրումների մինչև 40%-ի չափով մասնակի վերադարձի հնարավորությունը, որը փոխհամագործակցության զարգացման հնարավորություն կարող է ապահովել։ Այս համատեքստում ընդգծվել է երկու երկրների ոլորտային կառույցների անմիջական և սերտ

համագործակցությունը՝ նոր նախաձեռնությունների իրականացման նպատակով:

Կարևորել ենք նաև գրավոր ժառանգության և գրականության ոլորտում համագործակցությունը: Ընդգծվել է Մատենադարանի և Իրանի գրավոր ժառանգության ուսումնասիրության կենտրոնի արդյունավետ գործակցությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև գրականության փոխադարձ տարածմանը: Տեղեկացրել եմ, որ Հայաստանի ազգային գրադարանում առանձնացված է իրանական գրականության նմուշների հավաքածու, իսկ Հայաստանում իրականացվում են իրանական դասական և ժամանակակից ստեղծագործությունների թարգմանություններ:

Հանդիպման ավարտին նախարար Սեյեդ Աբբաս Սալեհին հրավիրել է Հայաստան՝ շարունակելու կառուցողական երկխոսությունն ու խթանելու Հայաստանի և Իրանի միջև մշակութային համագործակցությունը:

Պատվիրակության այցի շրջանակում՝ Իրանի Կինոյի թանգարանում սեպտեմբերի 6–8-ն անցկացվել է նաև Սերգեյ Փարաջանովի ֆիլմերի ցուցադրություն. ցուցադրվել են «Նռան գույնը», «Աշուղ Ղարիբ», «Լեգենդ Սուրամի ամրոցի մասին» ֆիլմերը:

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 8-ին Պատվիրակությունը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ահմադ Դոնիամալիի հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ տնօրեն Խորեն Զարգարյանը և ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գրիգոր Հակոբյանը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ կարևորել եմ երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունները՝ ընդգծելով, որ Հայաստանի և Իրանի միջև գործընկերությունն ունի խորքային նշանակություն ոչ միայն կրթության և մշակույթի, այլև սպորտի և երիտասարդության ոլորտներում: Շեշտել եմ, որ ՀՀ կառավարությունը խրախուսում է լավագույն փորձի փոխանակումը և շահագրգռված է համատեղ նախաձեռնությունների շարունակական զարգացմամբ:

Անդրադառնալով համագործակցության խորացմանը՝ առաջարկել եմ դիտարկել համատեղ ուսումնամարզական հավաքների կազմակերպումը և փորձի փոխանակումը: Կարևորվել է հատկապես սպորտի ոլորտի կառավարման, ֆեդերացիաների գործունեության կազմակերպման, մարզական ենթակառուցվածքների զարգացման ու մարզիկների աջակցման ուղղությամբ փորձի փոխանակման հնարավորությունը: Ընդգծել եմ նաև, որ վերջին տարիներին ՀՀ կառավարությունը որդեգրել է խոշոր միջազգային մրցաշարեր հյուրընկալելու քաղաքականություն, և այս համատեքստում ողջունել եմ իրանցի մարզիկների մասնակցությունը այդ մրցաշարերին: Ասել եմ, որ նման մրցաշարերին մասնակցությունը դառնում է նաև երկու երկրների միջև զբոսաշրջության խթանման հավելյալ հնարավորություն՝ ներգրավելով բազմաթիվ մարզասերների,

իսկ միջոցառումները հրաշալի առիթ են մարդկանց միջև կապերը զարգացնելու և համագործակցությունը խորացնելու առումով:

Անդրադարձ է եղել նաև շախմատի զարգացմանը, նշել եմ, որ Հայաստանն առաջին երկիրն է, որը շախմատի ուսուցումը՝ որպես պարտադիր առարկա, ներառել է հանրակրթական դպրոցներում:

Ահմադ Դոնիամալին բարձր է գնահատել Պատվիրակության այցը՝ ընդգծելով, որ Իրանը կարևորում է սպորտի ոլորտում համատեղ ծրագրերի և փորձի փոխանակման շարունակականությունը: Նա ընդգծել է հատկապես շախմատի բնագավառում հայաստանյան փորձի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրությունը: Անդրադարձ է եղել նաև ըմբշամարտ, մարմնամարզություն, ծանրամարտ, ձյուդո մարզաձևերում համագործակցության խորացման հնարավորություններին: Նրա դիտարկմամբ՝ տարբեր մրցաշարերում հայ և իրանցի մարզիկների մասնակցությունը նպաստում է ոչ միայն մարզական արդյունքների բարձրացմանը, այլև ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդմանը:

Հաջորդիվ Պատվիրակությունը հանդիպել է Իրանի Իսլամական Հանրապետության գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարար Հոսեյն Սիմայի Սարրաֆի հետ: Հանդիպմանը ներկա են եղել նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը, ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանը, ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Բրյուսովի պետական համալսարանի ռեկտոր Դավիթ Գյուրջինյանը, Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը, ինչպես նաև Պատվիրակության այլ անդամներ:

Հանդիպման ընթացքում կարևորել ենք Հայաստանի և Իրանի բարեկամական հարաբերությունները և դրանց ամրապնդման ուղղությամբ իրականացվող քայլերը: Համոզմունք եմ հայտնել, որ ԻԻՀ նախագահ Մասուդ Փեզեշքիանի և նրա գլխավորած պատվիրակության այցը Հայաստան նոր խթան կհանդիսանա երկկողմ համագործակցության զարգացման համար:

Ընդգծելով բարձրագույն կրթության և գիտության ոլորտում համագործակցության ընդլայնման հնարավորությունը՝ պատրաստակամություն ենք հայտնել ներդնելու ջանքեր երկկողմ կապերի խորացման նպատակով:

Այնուհետև ներկայացրել եմ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումները՝ ընդգծելով, որ դրանք որակական փոփոխությունների հանգեցնող գործընթացներ են: Անդրադարձ եմ կատարել «Ակադեմիական քաղաք» ծրագրին՝ նշելով, որ այն հանրային միջավայր ու մթնոլորտ վերափոխող նախագիծ է, որը նպաստելու է ՀՀ-ում բուհական կրթության արդիականացմանը, միջազգային մրցունակության բարձրացմանը և ժամանակակից գիտահետազոտական միջավայրի ապահովմանը:

Տեղեկացրել եմ նաև, որ վերջին տարիներին ՀՀ կառավարությունն էապես մեծացրել է գիտության ոլորտի ֆինանսավորումը, ներկայում շրջանառվում է նաև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» նոր օրենքի նախագիծը, որով օրենսդրական հիմքեր են դրվելու նաև օտարերկրյա գիտնականների հետ համատեղ նախաձեռնությունների և դրամաշնորհային ծրագրերի մասնակցության համար:

Կարևորել եմ նաև Իրանի բարձրագույն ուսումնական հաստատություններում հայագիտության զարգացման հեռանկարները: Իմ խոսքով՝ երկու երկրների ընդհանուր պատմական անցյալը, ինչպես նաև իրանահայ համայնքի կարևոր դերակատարությունն ընձեռում են հայագիտության զարգացման հնարավորություններ: Տեղեկացրել եմ նաև, որ հայագիտության զարգացման նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է տարբեր երկրների համալսարաններում հայագիտական կենտրոնների գործունեությունը՝ առաջարկելով դիտարկել նաև իրանական բուհերից մեկում նմանօրինակ կենտրոնի հիմնումը:

Հանդիպման ընթացքում շեշտվել է նաև Հայաստանի և Իրանի բուհերի դիպլոմների փոխճանաչման կարևորությունը: Քննարկել ենք դասավանդողների և գիտնականների փոխանակման, կրթական և գիտական համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Աշխատանքային այցը եզրափակվել է Իրանի Իսլամական Հանրապետության կրթության և դաստիարակության նախարար Ալիռեզա Քազեմիի հետ հանդիպմամբ: Հանդիպմանը մասնակցել են նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ԻԻՀ-ում ՀՀ դեսպան Գրիգոր Հակոբյանը, ՀՀ պատվիրակության մյուս անդամները: Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության և հագեցած օրակարգի ապահովման համար՝ կարևորել եմ երկու երկրների միջև բարեկամական սերտ համագործակցությունը: Վստահություն եմ հայտնել, որ ԻԻՀ նախագահ Մասուդ Փեզեշքիանի և նրա գլխավորած պատվիրակության՝ ավելի վաղ Հայաստան կատարած այցը երկու բարեկամ պետությունների կապերի ամրապնդման ու փոխհամագործակցության զարգացման խթան է հանդիսացել: Ժաննա Անդրեասյանն ընդգծել է՝ Հայաստան-Իրան ռազմավարական գործընկերության շրջանակում կրթության ոլորտի փոխգործակցությունն առանցքային նշանակություն ունի:

ԻԻՀ կրթության և դաստիարակության նախարար Ալիռեզա Քազեմին, ողջունելով Պատվիրակության այցը, կարևորել է Հայաստանի հետ համագործակցությունն ու շնորհակալություն հայտնել պարսկերենի ուսուցման շուրջ գործադրվող ջանքերի համար:

Ալիռեզա Քազեմին փոխանցել է իրանական կողմի հետաքրքրվածությունը Հայաստանի հանրակրթական դպրոցներում «Շախմատ» առարկայի դասավանդման ուղղությամբ՝ այն դիտարկելով որպես նորարարական մոդել կրթության ոլորտում:

Հանդիպման ընթացքում ներկայացրել եմ տեխնոլոգիական կրթության հայաստանյան փորձը, ինչպես նաև դպրոցականների

շրջանում ֆիզիկական կրթության և առողջ ապրելակերպի խրախուսման ուղղությամբ կազմակերպվող մրցաշարերը:

Անդրադարձ է եղել նաև միջին մասնագիտական և արհեստագործական կրթության ուղղությամբ համագործակցության հեռանկարներին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Իրանի ազգային գրադարանի և արխիվի կազմակերպությունում ստորագրվել է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի և ԻԻՀ ազգային գրադարանի ու արխիվի կազմակերպության միջև» փոխըմբռնման հուշագիրը: Փաստաթուղթը ստորագրել են Մատենադարանի տնօրեն Արայիկ Խզմալյանն ու ԻԻՀ ազգային գրադարանի և արխիվի կազմակերպության ղեկավար Ղոլամռեզա Ամիրխանին:

Հուշագիրը նոր հնարավորություններ է ստեղծելու հայերեն և պարսկերեն հին ձեռագրերի համատեղ ցուցադրությունների կազմակերպման, ինչպես նաև գիտահետազոտական ծրագրերի իրականացման համար:

Ստորագրվել է նաև «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ԻԻՀ գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին 2025-2029 թվականների» փոխըմբռնման հուշագիրը: Փաստաթղթով նախատեսվում է կրթական համակարգերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատում, պրոֆեսորադասախոսական կազմի փոխայցելությունների խրախուսում, ուսումնական ծրագրերի փոխանակում և այլն:

Հուշագիրը նոր հնարավորություններ է բացելու ինչպես երկու երկրների բուհերի, այնպես էլ ուսանողների, շահագրգիռ այլ կողմերի համար:

Ձեռք է բերվել նաև պայմանավորվածություն Հայաստան հրավիրել ԻԻՀ մշակույթի և իսլամական առաջնորդության և մշակութային ժառանգության, զբոսաշրջության և ձեռարվեստի նախարարներին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Այցերի ընթացքում երկուստեք առաջարկվել է դիտարկել համատեղ նախագծերի իրականացման հնարավորությունները մշակույթի, կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության ոլորտներում, ինչպես նաև փորձի փոխանակման ծրագրեր նախաձեռնելու ուղիները:

Կստեղծվեն համատեղ աշխատանքային խմբեր Հայաստանում պարսկերենի ուսուցման և Իրանում հայերենի ուսուցման զարգացման համար: Կմշակվեն համագործակցության նոր փաստաթղթերի երկու պետությունների կրթամշակութային կառույցների միջև:

Առաջարկվել է նաև գործուն քայլեր ձեռնարկել Հայաստանի և Իրանի բուհերի դիպլոմների փոխճանաչման ուղղությամբ, որի նպատակով Կողմերը կհաստատեն համապատասխան բուհերի ցանկը:

9. Ստորագրություն, ամսաթիվ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան

9/11/2025

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

———————————————————————

11.09.2025 թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 326 Ն որոշման

«Հավելված N 3 ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 746 Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Ժաննա Անդրեասյան՝ նախարար
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Իրանի Իսլամական Հանրապետություն /Շիրազ,Թեհրան/

5. Գործուղման ժամկետները՝ 2025թ. 06.09 Շիրազ, 07.09-08.09 Թեհրան

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ գիշերակացի հետ կապված ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

02698732

Ծախսի տեսակը		Ժաննա Անդրեասյան		Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը	Էկոնոմ		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***85194***		***85.194***
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	.		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	43		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	16447		16.447
	Օրերի քանակը	1		
	Վճարը 1 օրվա համար (դոլար)	51		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	19507		19.507
	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	***55461***		***55.461***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Այլ ծախսեր (.....)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***140.655***		***140.655***

Ծանոթություն: Նախնական վճարվել է 0 << դրամ, ենթակա է վճարման 140655 << դրամ:

Արտարժույթի միջին փոխարժեքն առ 10.09.2025թ.

1 դոլար = 382.95 դրամ

1 CNY = 53.776 դրամ

1 JPY = 26.14 դրամ

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

02698732